ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
2025-2026 ուստարի
10-րդ դասարան
(Տևողությունը՝ 3 ժամ)

❖ **Սիրելի՛ բարեկամ, կարդա՛ հատվածն ու կատարի՛ր առաջադրանքները:**
Հատվածը ներկայացված է ըստ Արեգ Թադևոսյանի «Հեքիաթ լեռան ու լեզվի մասին» պատմվածքի:
Մաղթում ենք հետաքրքիր ու արդյունավետ աշխատանք:

ՀԵՔԻԱԹ ԼԵՌԱՆ ՈՒ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Դեպքը կատարվեց հազարավոր տարիներ առաջ այժմյան Արարատյան դաշտի տեղում: Այդ ժամանակ այնտեղ տարածված էին վայրի խիտ անտառներ, ուր ազատ վազում էին վիթն ու այծյամը, հոսում էին լեռնային ահեղագոչ գետերը: Շրջակա դաշտերն ու հովիտները խաղաղ էին: Կապույտ երկինքը շողշողում էր ժպտերես, և համատարած անդորրը ժամանակ առ ժամանակ խախտում էր թռչունների ուրախ ճռվողյունը:

Զանգակաձև Լեռը, որ բազմել էր այդ չնաշխարհիկ վայրերի հորիզոնում, բոլորովին նման չէր մեզ ծանոթ սպիտակափառ ծերունուն: Նա կրակոտ, բոնկուն երիտասարդ էր՝ միաժամանակ օժտված նահապետի ծանրախոհությամբ և իմաստնությամբ:

Մի օր, երբ Լեռը սովորականի պես նայում էր իր առջև տարածված դաշտավայրին, զարմանալի բան կատարվեց. շրջապատի անդորրը խախտվեց: Միահյուսված պատատուկների խիտ պատը ճեղքվեց, և այնտեղից դուրս եկան երկու արարած: Նրանք նման էին կենդանու, բայց և ունեին ինչ-որ բան, որով տարբերվում էին մինչ այդ տեսած բոլոր արարածներից. հաղորդակցվում էին հնչյուններով: Այդ ձայները դեռևս հնարավոր չէր լեզու անվանել, բայց դա արդեն խոսք էր, որը կենդանուն դարձնում է մարդ:

Անցան հարյուրավոր տարիներ: Անորոշ հնչյուններն աստիճանաբար վերածվում էին գեղեցիկ լեզվի, երգի, հեքիաթի:

Բայց քանի հարստանում, բյուրեղանում էր Լեզուն, մարդկանց էությունն այնքան աղտոտվում, ապականվում էր: Լեռը ապշում էր մարդկանց հոգիների աղավաղումից: Մեծն Արարիչը ևս զայրացած էր: Իր իսկ ստեղծած անաղարտ էակների փոխարեն տեսնելով բիրտ ու ընչաքաղց մարդկանց՝ որոշեց մաքրել հողը նրանցից:

Եվ ահա մի անգամ Լեռն զգաց, որ իր փեշերը աստիճանաբար ողողվում են ջրով: Հեղե՞ղ: Ո՛չ, սա արդեն նման չէր այն սովորական անձրևներին, որոնցից շատ էր տեսել: Ջուրը, արագորեն բարձրանալով, հասավ Լեռան լանջերին, ապա՝ գագաթին: Լեռը միանգամից չընկալեց կատարվածի ահավորությունը… Եվ երբ ջրհեղեղը դադարեց, նա հասկացավ, որ պահպանվել է մի հողակտոր-կղզյակ, և դա իր գագաթն է: Ջո՛ւր, ջո՛ւր… Բայց մի օր հեռվում՝ ջրերի վրա, նա մի փոքրիկ սև կետ նշմարեց, որը քանի գնում մեծանում, երկարուկ տեսք էր ստանում: Դա նավ էր, որ հանգրվանեց կղզյակի վրա: Ու լեռը դարձյալ լսեց մարդկային ձայներ և իր գոյության ընթացքում երկրորդ անգամ ապշահար ու կարոտով սկսեց ականջ դնել: Խոսողը Նոյ նահապետն էր:

Կրկին անցավ որոշ ժամանակ, և ջուրն աստիճանաբար սկսեց հետ քաշվել: Նոյի որդիները, թոռներն ու ծոռները ցրվեցին աշխարհով մեկ: Սակայն նրա զարմից Հայկը, տեսնելով շրջակայքի գեղեցկությունը և հավանելով զովասուն օդը, բնակություն հաստատեց Լեռան դիմաց գտնվող մի բարձրավանդակում և սկսեց ծաղկեցնել երկիրը՝ այն անվանելով Հայք:

Հայկը և նրա գերդաստանը խաղաղասեր մարդիկ էին. չէին նեղում ոչ ոքի, չէին խլում ուրիշի ունեցվածքը: Սակայն ճակատագրով նրանց հանգիստ չէր տրված: Հայկա ցեղի գլխին արհավիրքներն այնքան հաճախակի էին թափվում, որ շունչ քաշելու ժամանակ չէր լինում: Բայց հայկազուններն անպարտ էին:

Բնությունը տեսավ, որ ոչինչ չի ընկճում այդ քաջազուն զարմի ոգին, որոշեց վարձատրել նրանց:

- Ի՞նչ տամ նրանց, - հարցրեց Բնությունը Լեռանը, - արվե՞ստ, գի՞ր, ոսկի՞, հզորությո՞ւն:

-Ո՛չ,-պատասխանեց Լեռը,- ժամանա՛կ տուր, և նրանք ամեն ինչ կստեղծեն իրենց ձեռքերով և իրենց աստվածային Լեզվով:

Համաձայնեց Բնությունը: Երկիրը բարգավաճեց, զորացավ, ծնեց պայծառ ուղեղներ: Լեռան լանջերին նոր սերունդներ եկան, հղկեցին, փայլեցրին Լեզուն: Երգեցին, սիրեցին, խոսեցին, գրեցին, կարդացին, լաց եղան և ծիծաղեցին հայոց լեզվով:

Արդեն դարեր Լեռն ու Լեզուն փարված են իրար և այնպես ամուր են գրկախառնվել, որ ոչ ոք նրանց բաժանել չի կարողանում: Հենց այս միասնությունն է պահում հայ ժողովրդին:

Առաջադրանքներ

1. Ինչու՞ Հայկը ընտրեց զանգակաձև Լեռան մերձակա տարածքը: Ո՞րն է այդ լեռան և «մեզ ծանոթ սպիտակափառ ծերունու» խորհուրդը և ձգողական ուժը: Հիմնավորի՛ր քո դիտարկումը: **5 մ.**
2. Ի՞նչ ես կարծում՝ արժեքների աղավաղումը երբևէ մնացե՞լ է և կմնա՞ անպատժելի: Հիմնավորի՛ր ասելիքդ՝ այն դիտարկելով ժամանակի և տարածության մեջ: **5 մ.**
3. Արդյոք դու քեզ զգում ես անպարտ հայկազուն: Մեկնաբանի՛ր քո զգացողությունները: **5 մ.**
4. Ինչո՞ւ է հայոց լեզուն արարող և աստվածային: Հիմնավորի՛ր ասելիքդ: **5 մ.**
5. Ըստ քեզ՝ շահեկա՞ն էր հայկազունների համար Լեռան և Բնության համաձայնությունը: Համամի՞տ ես, որ քաջազուն հայերը ժամանակի մեջ իրականացրել են Լեռան տեսլականը, թե՞ դեռ ճանապարհ ունեն անցնելու: **10 մ.**
6. Ըստ քեզ՝ արդյոք Լեռը և Լեզուն միասին են: Ինչպե՞ս ես մեկնաբանում Լեռան և Լեզվի անբաժանելի միասնությունը: Ինչպե՞ս է այն պահում հայ ժողովրդին: **10 մ.**

Առավելագույն միավորը՝ 40:
Միավոր չի տրվում հետևյալ դեպքերում.
• Պատասխանն ամբողջությամբ վերաշարադրանք է:
• Գաղափարը չի բխում տրված նյութից:

Ուշադրություն
Բոլոր առաջադրանքների շարադրանքներից միավոր է հանվում նաև, երբ առկա են.
• ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
• բառագործածության ու շարադասական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
• մտքի ձևակերպման սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
• հարակից սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար):

❖ **Գրի՛ր ստեղծագործական-վերլուծական շարադրանք Պարույր Սևակի «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմի տրված հատվածի շուրջ:**
Առավելագույն միավորը՝ 10:

Շարադրանքդ կարժանանա առավելագույն միավորի, եթե՝
1. Ընտրել ես տրված հատվածի հիմնական թեման, գաղափարը, կարողացել ես վերաձևակերպել և քո բառերով ներկայացնել բանաստեղծի ասելիքը:
2. Կիրառել ես հարուստ բառապաշար և պատկերավորման միջոցներ, կարողացել ես բանաստեղծի գործածած արտահայտչամիջոցները քո շարադրանքում կիրառել նորովի:
3. Վերլուծել ես բանաստեղծությունը, անդրադարձել ես բանաստեղծության խորհրդանիշին:
4. Արժևորել և գնահատել ես բանաստեղծությունը, հիմնավորել ես քո վերաբերմունքը: Դրսևորել ես երևակայություն և ստեղծագործական մոտեցում:
5. Շարադրանքդ լեզվական առումով անթերի է. տեղին և գրագետ ես կիրառում հայերենի ոճական և քերականական առանձնահատկությունները:

Պարույր Սևակ
Եվ այր մի՝ Մաշտոց անուն

….Այո՛, մենք կայինք նաև Նրանից առաջ:
Սակայն աշխարհի լայնքի վրայով
Մի չտեսնված մրրիկ էր անցել:

….Իջել էր արդեն անտարբերություն մի կործանարար
Ե՛վ վաղվա հանդեպ,
Ե՛վ ապագայի:
Ոչ ոք չգիտեր՝ վաղն ինչ կբերի:

….Պետք էր, շա՜տ էր պետք ինչ-որ բան անել,
Սակայն ի՞նչ անել և ինչպե՞ս, ինչպե՞ս:
Ու բոլորն էին այդ հարցը տալիս,
Իսկ պատասխանող չկա՛ր ու չկա՛ր…

Եվ այդ պահին էր, որ աշխարհ եկավ
Նա՝
Այր մի՝
Մեսրոպ Մաշտոց անունով:

….Նրանք ծնվում են ինչ-որ հանճարեղ մի հոգնությունից,
Որպեսզի դառնան հանճարեղություն:
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե վերջը մի տեղ դառնում է սկիզբ:

Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե հրաշք չկա՜,
Կա միայն կարի՛ք:
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամե՜ն մի հնար…

….Քանզի նորատիպ այդ մաքառման մեջ
Այրուձիի տեղ մտքերն են կռվում,
Թանաք է հեղվում արյան փոխարեն,
Եվ հաղթանակը կոչվում է Մատյան…

Մենք կայինք, այո՛, Նրանից առաջ:
Սակայն Նա ծնվեց,
Որ գա ու դառնա ինչ-որ նոր Սկիզբ:

….Մեզանից խլված մեր պետության տեղ
Ստեղծեց մի նոր՝
Չեղյա՜լ պետություն,
Թագավորություն մի հզորազոր՝
Ո՛չ թե մեզանից խլված հողերի,
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,
Այլ մեր անբաժա՛ն,
Մեր անկիսելի՛,
Երբե՜ք չխլվող հոգիների մեջ:

….Նա օտար հրի ճարակի դիմաց
Մեր ինքնությունը կոփեց ու կռեց….

….Եվ մենք, Նրանով միշտ զինավառված,
Միասին եղանք ցիր ու ցան արված.
Անվերջ կրելով զարկեր ու հարված,
Նույնիսկ հաղթվելով ժանտ բանակներից՝
Ժանտերից ժանտին հաղթեցինք կյանքում –
Հաղթեցինք դաժան ժամանակներին.
Կանգուն առ կանգուն թաղվելով հողում՝
Հառնեցինք դարձյալ,
Մնացինք կանգուն….

….Այսպե՛ս ապրեցինք
Եվ այստե՛ղ հասանք:

….Մենք՝ հինը հնից,
Նորացա՜նք նորից:
Եվ այս ամենը՝
Նրա՛ շնորհիվ…

….Մաշտո՜ց…
Այսինքն՝ Ա՛յր մի, որ եկավ ապացուցելու,
Թե մի տեղ վերջը դառնում է Սկիզբ:

Այսինքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց,
Թե հրաշք չկա՜,
Այլ կա լոկ կարի՛ք:

Այսինքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց
Եվ կոչ է անում ապացուցելո՜ւ,
Որ այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամե՜ն մի հնար…

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Հովհաննիսյան